«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցիչ- ծնող համագործակցության ձևերը միջին դպրոցում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականության

Հետազոտող ուսուցիչ՝ Տաթևիկ Ալեքսանյան

Ուսումնական հաստատություն՝ Շամլուղի միջնակարգ դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2021-2022 ուս.տարի

Թեմա-<<Ուսուցիչ-ծնող համագործակցության ձևերը միջին դպրոցում>>

Դպրոց-Շամլուղի միջնակարգ դպրոց

Առարկա-Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ-Տաթևիկ Ալեքսանյան

Հիմնահարցը-Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով ապահովել ծնող-դպրոց արդյունավետ համագործակցություն:

Հետազոտության նպատակն է-Մշակել և հիմնավորել ընտանիքների ծնողների,սովորողների և ուսուցիչների փոխգործակցության արդյունավետության համալիրը,դրա ապահովման ուղիները,միջոցներն ու ձևերը: Հիմնավորել մանկավարժական այն պայմանները,որոնք արդյունավետ կդարձնեն դպրոցի,սովորողների և նրանց ընտանիքների համագործակցությունը միասնական դաստիարակչական դաշտի ապահովման տեսանկյունից:

Մեթոդները-հարցազրույց,անկետավորում,զրույց:

Թիրախային խումբ-ծնողներ,ուսուցիչներ

Ներածություն

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը:Կրթության համար պատասխանատվություն են կրում ընտանիքը և դպրոցը:Այդ տեսանկյունից բացարձակ անհրաժեշտություն է դառնում երեխաների,ծնողների և դպրոցների միջև հաղորդակցման բարելավումը և նրանց իրական համագործակցության կառուցումը:
Ներկայումս ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրում.սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային նկարագիրը՝արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության,դպրոցի,ընտանիքի և ընդհանրապես համայնքի համագործակցության հիմնախնդիրը:

Այս տեսանկյունից դպրոցների մանկավարժական կոլեկտիվներն իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու,այլև բարոյական ,մարդասիրական հատկանիշներով օժտված ,ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների ,հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ:

Ուսուցչի և ծնողի համագործակցային աշխատանքը հատուկ կարևորություն է ստանում կրտսեր դպրոցական տարիքի վերջում,քանի որ միջին օղակ փոխադրվելիս աշակերտներին սպասվում են սոցիալական և հոգեբանական լուրջ փոփոխություններ:Կրտսեր օղակից անցումը միջին օղակ համարվել է մանկավարժների համար բարդ խնդիր,իսկ հինգերորդ դասարանում ադապտացվելու շրջանը՝ դպրոցական ուսուցման բարդագույն շրջաններից մեկը:Մի կողմից՝կրտսեր դպրոցականները ,գտնվելով նախաճգնաժամային փուլում,դառնում են անկառավարելի,իսկ մյուս կողմից՝ նրանք շատ ճկուն են,դինամիկ,պատրաստ են

համագործակցության ու սպասվող փոփոխություններին:Թեև այս տարիքի աշակերտների մտածողությունը դեռևս այնքան էլ համակարգված չէ,սակայն նկատելիորեն տարբերվում է կրտսեր դպրոցականի մտածողությունից,այսինքն այն ռեֆլեքսիվ է ,որի շնորհիվ աշակերտներն ընդունակ են գիտակցելու իրենց մտածողության,խոսքի և հիշողության գործընթացները:Աշակերտի մոտ ձևավորվում են սեփական պատկերացումներ իր իմացական,ֆիզիոլոգիական,ֆիզիկական,ինչպես նաև անձնային որակների մասին:Նա կարողանում է կանխորոշել իր ճանաչված և ընդունված լինելու հավանականությունը հասակակիցների շրջանում:

Կրտսեր օղակից միջին օղակին անցնելը ուղեկցվում է մի շարք հոգեբանական դժվարություններով,որոնք կարող են և՛օբյեկտիվ,և՛ սուբյեկտիվ լինել:

Հատկապես այս տարիքում շատ ավելի է մեծանում ծնողների և ուսուցիչների դերը,նրանց աջակցությունը,իրենց երեխային կամ սանին ճանաչելու,հասկանալու կարողությունն ու պատրաստակամությունը:Չի կարելի անտեսել նաև դպրոցի հոգեբանին,որն իր մասնագիտական պատրաստվածությամբ,աչալրջությամբ,գործի հանդեպ ունեցած վերաբերմունքով ու գործի կարևորության գիտակցումով կանգնած է այն աշակերտի կամ խմբի կողքին,ով դրա կարիքն ունի:Նա կազմակերպում է հանդիպումներ,քննարկումներ,թրեյնինգներ:

Աշակերտները հաճախ են ունենում տարաբնույթ դժվարություններ,և նրանց որոշակի աջակցություն ցույց տալու համար ուսուցիչը պետք է սկսի կենսական դժվարությունների դիտարկումից:

Դեռահասները հաճախ են հայտնվում սթրեսային իրավիճակներում,քանի որ երբեմն ունենում են բացասական մտքեր ու զգացմունքներ,դպրոցում `ուսումնական դժվարություններ,իրենց հնարավորություններից բարձր պահանջներ,միջանձնային կոնֆլիկտներ,ընտանեկան խնդիրներ,ծնողների բաժանություն կամ խրոնիկ հիվանդություն և այլն:Կամ, նրանց իրավիճակը թվում է ավելի վտանգավոր ու անհուսալի,քան իրականում է,չունեն այդ իրավիճակը հաղթահարելու անհրաժեշտ հմտություններ,չունեն բավարար կենսափորձ,գիտելիքներ,որոնց արդյունքում էլ հաճախ չեն կարողանում կառավարել իրենց վարքը,չեն կարողանում զսպել զայրույթը,որի պատճառով էլ ունենում են անցանկալի և թվացյալ անլուծելի պրոբլեմներ:Եթե սթրեսային իրավիճակը չի կանխվում կամ սխալ է հաղթահարվում,կարող է հանգեցնել անհանգստության,մեկուսացման,ագրեսիայի,ֆիզիկական հիվանդությունների կամ այլ անցանկալի դրսևորումների:Այդ ժամանակ է՛լ ավելի է մեծանում ծնողի դերն ու նշանակությունը:Նրանք իրենց երեխաների վարքում ,գործողություններում,արտահայտություններում նկատվող անսովոր ու անհանգստացնող փոփոխությունները պետք է չանտեսեն ու սովորեցնեն սթրեսը հաղթահարելու հմտությունները,օգնեն կանխել գերլարված վիճակը,նպաստել սպորտով և այլ հասարակական գործունեությամբ զբաղվելու և այլն:

Աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից,երեք գլուխներից,եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլուխը կրում է <<**Մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքի համագործակցության կազմակերպման պայմանները**>> խորագիրը:Եթե մենք իսկապես ուզում ենք բավարարել մեր հասարակության կրթական կարիքները,անհրաժեշտ է սովորողների ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ՝ ուսուցումն առավել ընդհանրական և արդյունավետ դարձնելու նպատակով:

Ընտանիքը հասարակության սկզբնական բջիջն է:Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես,դեռևս օրորոցում:Ինչպես Վ.Հյուգոն էր ասում.<<Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին,որոնք աճում են,ծավալվում նրա հետ և կազմում նրա անկապտելի մասը>>:Կարևորը ճիշտ դաստիարակության սկիզբն է:Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում:Դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքն է:Ընտանիքում լավ փոխհարաբերությունների ,առողջ մթնոլորտի առկայության դեպքում աճում են բարեխիղճ,հոգատար,հանգիստ,հավասարակշռված և ուրախ մարդիկ:Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների և ուսուցիչների հետ:Ծնողները երեխայի առաջին կրթողներն են:Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ իրենց երեխաների կյանքի,մտավոր,ֆիզիկական և արժեքային համակարգը զարգացնելու համար:Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական տարիքի երեխաների կրթության համար:Իսկ պետությունը պարտավոր է որդեգրել մի այնպիսի կրթական համակարգ,որը կապահովի մարդու ամբողջ կյանքի ուսումնառությունը և անձնական զարգացման համար անհրաժեշտ հիմքեր:Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքում,և՛ դպրոցում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն:Արդիական են դառնում համայնքի՝ընտանիքների,կրթական հաստատությունների փոխգործակցության ուղիների և ձևերի որոշակիացումը,նախագծումը,այդ գործընթացի արդյունքների վերլուծությունն ու ընդհանրացումը երեխայի անձի զարգացման համատեքստում:

Միջին դպրոցական տարիքը համապատասխանում է հանրակրթական դպրոցի 5-8-րդ դասարաններին:Այս տարիքը կոչվում է դեռահասության շրջան:Իզուր չէ,որ այս հասակն անվանում են կրիտիկական,հուզումնալից:Քանի որ ֆիզիկական և հոգեկան զարգացումն ընթանում է անհամաչափ,այդ անհավասարակշռությունը հանգեցնում է անհամամասնության,որն էլ դեռահասին դարձնում է արտաքուստ անբարետես՝առաջ բերելով անլիարժեքության բարդույթ:

Միջին օղակում կամ դեռահասության տարիքում անձը ձգտում է ինքնավարության,ինքնահաստատման,ձգտում է ավելի լավ ճանաչել և հասկանալ իրեն,ձգտում է բացահայտել իր թույլ և ուժեղ կողմերը,փորձում է դրական որակներ զարգացնել:Դա դժվար գործընթաց է,քանի որ նա ունի որոշակի հատկանիշներ,որոնցից դժվար է հրաժարվել ,փոխել և ընդհակառակը:Դեռահասը պետք է դասեր քաղի նախկին սխալներից,հապճեպ ընդունած որոշումներից:Եթե այդ դժվարությունները դեռահասը կարողանում է հաղթահարել,ապա նվազում է դրանք հետագայում կրկնելու և ձախողվելու հավանականությունը:Միջին դպրոցականին պետք է սովորեցնել,որ նա դիմացինի մեջ տեսնի նրա առավելությունները,դրական որակները,որ չկառչի բացասական որակներից,քանի որ բոլորն էլ թերություններ ունեն և ընդունի նրան այնպիսին ,ինչպիսին կա:Սովորելով տեսնել և գնահատել դրական որակները այլ մարդկանց մեջ՝ դեռահասն ինքը զերծ է մնում վատ արարքներից,նպաստում է սեփական ինքնակատարելագործմանը,ինքնահաստատմանը,ներդաշնակության զգացմանը և բարելավում է հոգեկան առողջությունը:Հիմքեր են ստեղծվում համարժեք ինքնագնահատականի ձևավորման համար:Դրական ինքնագնահատականի հասնելու համար խորհուրդ է տրվում՝

ա/կենտրոնանալ հաջողությունների վրա,բ/ուշադիր լինել սեփական անձի հասցեին հնչած դիտողությունների նկատմամբ,գ/հարկ եղած դեպքում դիմել մտերիմների,ընկերների օգնությանը:Դրական ինքնագնահատականը մարդուն ուժ և վստահություն է հաղորդում դժվարությունները հաղթահարելու և կյանքը արժանավայել ապրելու ու արարելու համար:Այստեղ կարևորվում է ուսուցչի դերն ու նշանակությունը,քանի որ դեռահասը նախ և առաջ աշակերտ է,ով օրվա զգալի մասն անցկացնում է դպրոցում:Նա իր խնդիրների մասին կարող է խոսել ուսուցչի հետ՝ակնկալելով աջակցություն:Ուսուցիչը պետք է այնպես անի,որ դեռահասը արտահայտի իր զգացմունքները և նաև պատրաստ լինի դրանք ընդունելու,որից հետո նոր միայն կարող է ձերբազատվել տրավմա առաջացնող հուշերից,ապրումներից և հաղթահարել ճգնաժամը:Կարևոր է,որ դեռահասը հասկանա,որ այն,ինչ կատարվում է իր հետ,իր նորմալ ռեակցիան է անոմալ իրավիճակին:Պետք է հասկանա,որ յուրաքանչյուր խնդիր պետք է լուծել հնարավորինս ընդունելի ձևով և առաջ շարժվել:

Այս շրջանում ծնողները և ուսուցիչը մանկավարժորեն,գրագետ և նրբանկատ մոտեցմամբ,հոգածությամբ պետք է հետևեն դեռահասի քայլերին,մանավանդ,որ կենսափորձի աղքատության շնորհիվ դեռահասը հաճախ է սայթաքում,թույլ տալիս անկշռադատ արարքներ:Թեև լրիվ ընդհանրացնել այդ ամենը բոլորի նկատմամբ ճիշտ չի լինի:

Այսպիսով՝ ուսուցիչ-ծնող համագործակցությունը խիստ կարևորվում է ոչ միայն դեռահասության տարիքում գտնվող աշակերտին օգնելու նպատակով,այլև

ցանկանում ենք ապահովել ծնողների հոգեբանամանկավարժական իրազեկում և նրանց լիարժեք մասնակցությունը երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացին:Ուստի կարելի է օգտագործել համագործակցության հետևյալ հնարավոր ձևերը.

.Ընթացիկ զրույցներ ա/ուսուցիչ-դասղեկ

բ/ուսուցիչ-դասղեկ-ծնող

.Դասղեկական ժամեր,մանկավարժական խորհրդի նիստեր,ծնողական ժողովներ,հոգեբանամանկավարժական միջոցառումներ,կլոր սեղաններ

.Ճանաչողական աշխատանքների համատեղ կազմակերպում

.Բազմաբնույթ միջոցառումներ

Գոյություն ունեն ուսուցչի և աշակերտի,ծնողի և երեխայի արդյունավետ համագործակցության ընդհանուր պայմաներ.

1/Յուրաքանչյուր համագործակցություն պետք է լինի ոչ պաշտոնական;

2/Համագործակցությունը պետք է ներկայացնի մեծահասակի անձնական շահագրգռվածությունը և արթնացնի երեխայի հետաքրքրությունը:

3/Համագործակցությունը պետք է լինի արդարացի և օբյեկտիվ:

4/Համագործակցությունը պետք է նպաստի առաջընթացին:

5/Համագործակցությունը պետք է կառուցվի ըմբռնման և օգնության վրա:

Հանրակրթական դպրոցում կրթության բովանդակության բարդացման ,սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության օրեցօր ավելացման արդի պայմաններում ոչ միայն դպրոցը,այլև երեխաներն են զգում ծնողների մանկավարժական գրագիտության անհրաժեշտությունը :Ուստի անհրաժեշտ է որոշակիացնել ընտանիքի կրթադաստիարակչական գործառույթները դպրոցի աշխատանքային պլանում ծնողների ուսուցման ծրագրի ներկայացման,ինչպես նաև որոշակի մանկավարժական պայմանների և ընտանիքի հետ համագործակցության նոր ձևերի և մեթոդների մշակման միջոցով:

Ծնողների մանկավարժական տեղեկացվածությունը ենթադրում է ընտանիքների հետ աշխատանքի հետևյալ ձևերի կազմակերպում.

.ծնողական համալսարաններ

.անհատական և թեմատիկ խորհրդատվություններ

.ծնողական ժողովներ

.սեմինարներ

Ծնողներին դասարանի ուսումնադաստիարակչական աշխատանքներին կարելի է ներգրավել՝կազմակերպելով գործունեության հետևյալ ձևերը.

.երեխաների և ծնողների ստեղծագործության օրեր

.բաց դասեր ու արտադասարանական միջոցառումներ

.մասնակցություն դպրոցի ու դասարանի աշխատանքներին

.ծնողական հսկողության սահմանում դասարաններում

Ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարմանը կարելի է կազմակերպել հետևյալ ձևերով.

.դասարանի ծնողների մասնակցությունը դպրոցի խորհրդի աշխատանքներին

. դասարանի ծնողների մասնակցությունը ծնողական խորհրդի աշխատանքներին

.ծնողի մասնակցությունը դպրոցի կազմակերպչական աշխատանքներին

Ծնողների մասնակցության ձևերից մեկը դպրոցի և դասարանի ***ծնողական խորհրդի*** գործունեությունն է:Ծնողական խորհրդի անդամներ են դառնում ամենաակտիվ և փորձառու ծնողները:Դասարանի ծնողական խորհուրդը ներգրավում է ծնողներին արտադասարանական միջոցառումների կազմակերպման ու անցկացման գործերին:

Ծնողների հետ աշխատանքի մի հետաքրքիր և արդյունավետ ձև է նաև ***ծնողական համալսարանը,***որի նպատակը համալրել ծնողների մանկավարժական և հոգեբանական գիտելիքները,ծանոթացնել նրանց դաստիարակության և մանակավարժության ժամանակակից խնդիրներին:

Ծնողական համալսարանում պարապմունքները կարող են անցկացվել զանազան ձևերով՝հարց ու պատասխաններ,դասախոսություններ,սեմինարներ և այլն:

Աշխատանքի 2-րդ գլուխը կրում է **<<Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության խնդիրները>>** խորագիրը:

Ներկայումս առաջնային կարևորություն է ձեռք բերել երեխայի դաստիարակության կազմակերպումը՝ դպրոցի և ընտանիքի սոցիալական գործընկերության հիմքով:Ընտանիքն ու դպրոցը հավասարապես պատասխանատու և շահագրգիռ են յուրաքանչյուր դպրոցի ու ընդհանրապես կրթության տարածաշրջանային համակարգի աշխատանքի որակի համար:Կրթական համակարգում կատարվող փոփոխությունները և դպրոցի առջև ծառացած խնդիրները պահանջում են վերանայել հարաբերությունները գործընթացի բոլոր մասնակիցների միջև:Հանրակրթական դպրոցը,ինչպես կրթության մյուս

մակարդակները,սոցիալական պատվեր է կատարում,և մանկավարժները պետք է լսեն հասարակայնության ձայնը,իմանան նրա կարծիքը կրթության որակի մասին:Ազգաբնակչության մեծ մասը,որը կապված է դպրոցի և կրթական այլ հաստատությունների հետ,սովորողների ծնողներն են:

Վստահաբար պետք է ասել,որ երեխայի՝որպես դաստիարակության սուբյեկտի ձևավորումն առաջին հերթին սկսվում է ընտանիքում:Հենց ընտանիքում են դրվում նրանց սոցիալականացման և անձնային որակների ձևավորման հիմքերը:Ընտանիքը՝որպես սոցիալական ինստիտուտ,երեխայի դաստիարակչական դաշտում պատասխանատու տեղ է զբաղեցնում:Յուրաքանչյուր ընտանիք հասարակության մի մասնիկն է:Միաժամանակ այն ներգրավված է սոցիալ-դաստիարակչական կառույցների մեջ:Ուստի դպրոցի հետ նրա սոցիալական գործընկերության հաստատումն օրինաչափ պահանջ է:

Սոցիալական գործընկերության բնորոշ հատկանիշներից է այն,որ պարտադիր չէ՝գործընկերները լինեն բարեկամներ և համախոհներ:Նրանք կարող են ունենալ տարբեր շահեր ու հնարավորություններ:Հնարավոր է ,որ նրանց միջև լինի հակասություն:Դաստիարակության ոլորտում դպրոցի ամենալավ գործընկերն ընտանիքն է:Ժամանակակից դպրոցի և ընտանիքի միջև շատ հակասություններ կան,այդ թվում՝դաստիարակության հարցերում:Ուսուցիչները դժգոհ են ընտանիքի ընդհանուր և մանկավարժական պատրաստականությունից:Ծնողներն էլ իրենց հերթին բողոքում են ուսուցիչների մասնագիտական ցածր մակարդակից:Ընտանիքի և դպրոցի դաստիարակչական ներուժի միասնականացումը և սոցիալական գործընկերական հարաբերությունների հաստատումը կտան ցանկալի արդյունք:Միևնույն ժամանակ դպրոցը և ընտանիքը պետք է դիտարկել որպես հավասար իրավունքներ ունեցող գործընկերներ,որոնց գործողությունների հիմքում ընկած է փոխադարձ հարգանքն ու վստահությունը:Ուստի երկու կողմերի սոցիալական գործընկերությունը պետք է դառնա դպրոցում երեխայի բարեհարմարության պայման:Այսպիսով,սոցիալական գործընկերությունն ինքնանպատակ չի լինի,այլ կդառնա նպատակի հասնելու միջոց:

Աշխատանքի 3 գլուխը կրում է<< **Դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերի արդյունքների վերլուծությունը**>>խորագիրը,որտեղ ներկայացվում են ծնողների ու երեխաների փոխգործակցության վիճակի իրական պատկերը բացահայտող անկետային հարցումների արդյունքները և դրանց վերլուծությունը:Անհրաժեշտ էր ստանալ ժամանակակից ծնողների ու երեխաների փոխգործակցության վիճակի իրական պատկերը ,որոշել ուսուցչի (դասղեկի)դերը ընտանիքում ծնողների ու երեխաների փոխգործակցության հիմնախնդիրների լուծման գործում,գրանցել ուսուցիչների ,ծնողների ու երեխաների փոխհարաբերությունների զարգացման ժամանակակից միտումները,ուսումնասիրել

ներընտանեկան շփման ու համագործակցության մանկավարժական ղեկավարման փորձն ու դերը:

Հետազոտությամբ բացահայտվեց,որ ընտանիքում ծնողների ու երեխաների արդյունավետ փոխգործակցության վրա էապես ազդում են նրանց անձնային որակները,համատեղ գործունեությունը,ծնողների մանկավարժական գիտելիքները,դաստիարակվածության մակարդակը,ազատ ժամանցի կազմակերպման կարողությունները:

Ծնողների հարցման արդյունքները վկայում են,որ վերջին շրջանում զգալիորեն իջել է ծնողների հետ երեխաների շփման ու համատեղ գործունեության իրականացման մակարդակը:

Ծնողների և երեխաների փոխգործակցության վերաբերյալ հարցումների արդյունքները հետազոտական աշխատանքից առաջ.

Հարցումների արդյունքները	Այո	Ոչ այնքան	Ոչ
Տրամադրու՞մ եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար	10	10	10
Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում	5	15	10
Քննարկու՞մ եք ընտանեկան խնդիրները Երեխայի հետ	5	10	15
Իրականացնու՞մ եք համատեղ ստեղծագործական աշխատանք ձեր երեխաների հետ	4	6	20
Գիտե՞ք,թե ձեր երեխան որտեղ է անցկացնում իր ազատ ժամանակը	10	5	15
Ձերբազատվա՞ծ է արդյոք ձեր երեխան շփման բարդույթներից	10	8	12
Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի դաստիարակման ընթացքում	7	17	6

Հարցման արդյունքում պարզվեց,որ ժամանակակից հայ ընտանիքում երեխաները մասնակցում են ընտանեկան համատեղ աշխատանքներին,ընտանեկան բիզնեսին,ընտանիքի կենցաղային հարցերի քննարկմանն ու լուծմանը:Ընտանիքի փոխգործակցությունը հիմնականում իրականացվում է ծնողների խորհրդատվական դերով,դպրոցում կազմակերպվող միջոցառումների քննարկմամբ,որոշ տնային գործերի կատարմամբ:

Ծնողների և երեխաների փոխգործակցության վերաբերյալ հարցումների արդյունքները հետազոտական աշխատանքից հետո.

Հարցումների արդյունքները	Այո	Ոչ այնքան	Ոչ
Տրամադրու՞մ եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար	20	5	5
Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում	18	6	6
Քննարկու՞մ եք ընտանեկան խնդիրները Երեխայի հետ	16	7	7
Իրականացնու՞մ եք համատեղ ստեղծագործական աշխատանք ձեր երեխաների հետ	15	7	8
Գիտե՞ք,թե ձեր երեխան որտեղ է անցկացնում իր ազատ ժամանակը	20	5	5
Ձերբազատվա՞ծ է արդյոք ձեր երեխան շփման բարդույթներից	18	9	3
Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի դաստիարակման ընթացքում	19	4	7

Ինչպես երևում է աղյուսակների ներկայացված տվյալների համեմատական վերլուծությունից,փոխգործակցության բովանդակությունն արտացոլող ցուցանիշները զգալիորեն փոփոխված են:Այսպիսով,դպրոցի և ընտանիքի համագործակցության մշակված ձևերն ու միջոցները նպաստեցին ինչպես մանկավարժական կոլեկտիվի և ծնողների համագործակցության զարգացմանը,այնպես էլ ծնողների և երեխաների արդյունավետ համագործակցությանը:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքների վերլուծությունը մեզ հնարավորություն է ընձեռում անելու հետևյալ եզրակացությունները.

1.Հետազոտության մեջ դպրոցի և համայնքի համագործակցությունը ,ծնողների և երեխաների փոխհարաբերությունների առանձնահատկությունները,ընտանիքի դաստիարակչական ներուժը դիտարկվել են որպես նրանց փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորող գործոններ:

2.Բացահայտված են դպրոցի դերը սովորողների և ծնողների փոխգործակցության գործում,մանկավարժների և ծնողների համատեղ գործունեության հնարավորությունները,ուսուցիչներին անհրաժեշտ հաղորդակցման,ճանաչողական,հուզական որակների ձևավորման ուղիներն ու միջոցները,որոնք մանկավարժական պրակտիկայում այսօր համարվում են լուրջ հիմնախնդիրներ:

3.Մշակվել և ստուգվել են դպրոցի,երեխաների և ընտանիքի համագործակցության զարգացման միջոցներն ու ձևերը,որոնք թույլ կտան ապահովելու այդ գործընթացի ապահովությունը և կարող են օգտագործվել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կողմից ընտանիքի հետ տարվող աշխատանքներում:

4. Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և՛ դպրոցական հասարակության, ծնողների, և՛ աշակերտության վրա:

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպիսին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

5. Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, նրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է:

6. Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն:

7. Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ:

8.Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

7. Ծնողների իրավունքը և պարտականությունն է դպրոցին տեղյակ պահել երեխաների խնամքին ու կրթությանն առնչվող իրենց որոշումների մասին:Անհրաժեշտ է խրախուսել ծնողների մասնակցությունը երեխաների կրթության գործին:Ուսուցիչները պարտավոր են մշտապես կապ պահպանել իրենց սաների ընտանիքների հետ:

Օգտագործված գրականություն՝

1.Ս.Սեդրակյան,Ա.Ղազարոսյան,Ն.Հակոբյան-<<Հոգեբանական աշխատանքները ուսումնական հաստատություններում>>(Մեթոդական ձեռնարկ),Երևան 2016

2.Ռուզաննա Մուրադյան-<<Դասղեկ>>,Երևան 2007

3.Վ.Վ.Գրիգորյան -<<Մանկավարժական կոլեկտիվի և համայնքի համագործակցության կազմակերպման ձևերը դպրոցում>>,Երևան 2012

4.Յու.Ամիրջանյան,Ա.Սահակյան- <<Մանկավարժություն>>,Երևան 2004